

թիւն կամ նորաձեւութիւն չկատարուի նոյն ծէսին մէջ ընդդէմ վերոյիշեալ միութեան, առանց Առաքելական Գահին բացայայտ հրամանին» (14) :

Սրբազան Ժողովին այս յայտարարութենէն ետք աւելի ազդու կը դառնայ Յակոբ Զուղայեցիի միջամտութիւնը լեհահայոց մօտ. 13 Օգոստոս 1669ին Կ. Պոլսէն նամակ մը դրելով Լէոպոլտոյ հայերուն ան կը դանդատի՝ թէ հայ ծէսին մէջ փոփոխութիւններ ներմուծուած են եւ թէ լատին վարժապետներու դիմած են դպրեմանքին կառավարութեան վրայ, առանց իր կարծիքը հարցնելու: Լէոպոլտոյ հայ երեսփոխանները կը պատասխանեն 1669ի Նոյեմբերին Քիերեմովիչ Եպիսկոպոսին միջոցաւ, յայտարարելով՝ թէ անցեալին յաճախ վարդապետ մը խնդրած էին իրմէ. այս խընդրանքին դոհացում չստանալով, Թորոսովիչ Արքեպիսկոպոս հարկադրուած էր դիմելու Ս. Աթոռին. եւ Հաւատոյ Տարածման Սըրբազան Ժողովը անմիջապէս ղրկած էր Թէադինեան կրօնաւորները: «Հայ Ազգը»՝ որ առանց ուսուցիչներու մնացած էր 25 տարի, չհակառակեցաւ Թորոսովիչ Արքեպիսկոպոսին այս դործին, որովհետեւ Յովհան Արղնեցի վարդապետին միջոցաւ փիլիպպոս Կաթողիկոս յանձնարարած էր լեհահայոց

(14) Benedetto XIV, Bolle e Costituzioni, Tomo 26, Riti Greci e Orientali, Parte II. No. 24. Archivio S. C. P. F. Polonica, fol. 348.